Հավելված
ՀՀ պաշտպանության նախարարի
2019թ. դեկտեմբերի 12-ի N 1663 Լ
հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում (այսուհետ՝ Նախարարություն)՝ հայաստանյան զանգվածային լրատվամիջոցների և ՀՀ օրենսդրության հիման վրա Հայաստանում գործող օտարերկրյա պետությունների զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների (այսուհետ՝ լրատվամիջոցի ներկայացուցիչ) հավատարմագրման հետ կապված հարաբերությունները:

2. Նախարարությունում լրատվամիջոցների ներկայացուցիչների հավատարմագրումն իրականացվում է տարեկան կամ կարճաժամկետ ձևաչափով:

II. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ

3. Լրատվամիջոցների ներկայացուցիչների տարեկան հավատարմագրման նպատակով, ոչ ուշ քան յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ը, Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի գլխավոր վարչության կողմից Նախարարության պաշտոնական կայքում այդ մասին հրապարակվում է հայտարարություն: Տարեկան հավատարմագրման հայտերի ներկայացման ժամկետը մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ն է :

4. Տարեկան հավատարմագրման հայտը ներկայացվում է էլեկտրոնային կամ փաստաթղթային եղանակով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.

1) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լրիվ անվա-

նումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը, իսկ եթե լրատվական գործունեություն իրականացնողը ֆիզիկական անձ է՝ նրա ազգանունը, անունը, հայրանունը և բնակության հասցեն (.pdf կամ .jpg ձևաչափով),

2) հավատարմագրման ներկայացվող լրագրողի նույնականացման քարտի կամ անձնագրի պատճենը (.pdf կամ jpg ձևաչափով),

3) լրագրողի ներկայացրած լրատվության միջոցի (լրատվության միջոցների) անվանումը, պաշտոնական նամակ՝ զանգվածային լրատվամիջոցի տնօրենի կամ գլխավոր խմբագրի ստորագրությամբ և կնիքով (.pdf կամ .jpg ձևաչափով),

4) լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի էլեկտրոնային հասցեները, հեռախոսահամարները (.pdf կամ .jpg ձևաչափով),

5) մեկ լուսանկար՝ հավատարմաքարտի համար (.jpg ձևաչափով):

5. Օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչ լրագրողի հավատարմագրման համար սույն կարգի 4-րդ կետով նախատեսված հայտին կցվում է նաև Հայաստանի Հանրապետությունում լրագրողի հավատարմագրման՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրված վկայականի լուսապատճենը, իսկ բնօրինակը ներկայացնում է լրագրողը:

6. Հավատարմագրման հայտերը քննարկվում են հավատարմագրման ժամկետի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի մերժման դեպքում հայտատուին 3-օրյա ժամկետում ուղարկվում է հավատարմագրման մերժման մասին գրություն՝ նշելով մերժման հիմքը: Հայտի հաստատումից հետո լրատվամիջոցի ներկայացուցչին տրամադրվում է անվանական հավատարմաքարտ, որը հանդիսանում է կազմակերպված միջոցառումները լուսաբանելու նպատակով Նախարարության համակարգի մարմիններ մուտք գործելու պաշտոնական փաստաթուղթ (ձև 1):

7. Նախարարության կազմակերպած միջոցառումները լուսաբանելու համար հրավիրվում են բացառապես Նախարարության կողմից հավատարմաքարտ ստացած լրատվամիջոցների ներկայացուցիչները:

III. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՀԱՎԱՏԱՐԱՄԱԳՐՈՒՄԸ

8. Կարճաժամկետ հավատարմագրումը Նախարարության կողմից իրականացվող առանձին միջոցառումների լուսաբանման նպատակով լրատվամիջոցի ներկայացուցչին տրված թույլտվություն է:

9. Կարճաժամկետ հավատարմագրման նպատակով լրատվամիջոցի ներկայացուցիչն իրեն հետաքրքրող լուսաբանումից (նկարահանում, հարցազրույց, լրահաղորդում և այլն) առնվազն 5 աշխատանքային օր առաջ կարող է էլեկտրոնային կամ փաստաթղթային եղանակով ներկայացնել հայտ՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.

1) նույնականացման քարտի կամ անձնագրի պատճենը: Եթե անձնագրի ժամկետը երկարացված է՝ նաև վավերականությունը հաստատող էջի պատճենը (.pdf կամ .jpg ձևաչափով),

2) մեկ լուսանկար՝ հավատարմաքարտի համար (.jpg ձևաչափով),

3) պաշտոնական նամակ՝ զանգվածային լրատվամիջոցի տնօրենի կամ գլխավոր խմբագրի ստորագրությամբ և կնիքով (.pdf կամ .jpg ձևաչափով), որում հստակ պետք է նշված լինի լրատվամիջոցի ներկայացուցչի (լրատվամիջոցների ներկայացուցիչների խմբի պարագայում՝ խմբի բոլոր անդամների) անունը, ազգանունը, ինչպես նաև նկարահանման, լրահաղորդման, հարցազրույցի և այլ գործընթացների սկիզբն ու ավարտը,

4) նկարահանման կամ լրագրողական այցելության ծրագիրը, նկարահանումների դեպքում՝ նախատեսվող վայրերն ըստ օրերի, նկարահանման միջոցը (անօդաչու թռչող սարք, տեսախցիկ, ֆոտոխցիկ և այլն):

10. Հավատարմագրման հայտը բավարարելու կամ մերժելու մասին տեղեկությունը Նախարարությունը հայտատուին տրամադրում է այն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

IV. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

11. Հավատարմագրված լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ համագործակցությունն իրականացվում է՝

1) ներկայացուցիչների կամավոր նախաձեռնության և հավատարմագրման կարգի պահանջներին համապատասխան,

2) զանգվածային լրատվության միջոցներով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների տեսակետներն ու կարծիքները ներկայացնելով, զինծառայության հետ կապված խնդիրների վերաբերյալ հավաստի տեղեկություն ստանալու իրավունք ապահովելով, ըստ անհրաժեշտության՝ տեղեկատվական անվտանգությունն ապահովելու նպատակով նախապատրաստվող նյութը Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի գլխավոր վարչության տեղեկատվական անվտանգության մասնագետի հետ քննարկելով:

12. Լրատվամիջոցի ներկայացուցիչը տեղեկացվում է, որ համացանցով կամ այլ եղանակով ռազմական բնագավառին վերաբերող՝ օրենքով սահմանված պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկատվության հրապարակումը սպառնալիք է պետության անվտանգության համար, և լրատվամիջոցի ներկայացուցիչը պատասխանատվություն է կրում օրենսդրության համաձայն:

13. Լրատվամիջոցի ներկայացուցիչը տեղեկացվում է նաև, որ համագործակցության ընթացքում Նախարարության համակարգի մարմինները ղեկավարվում են ՀՀ պաշտպանության նախարարի 2011 թվականի հուլիսի 29-ի N 863 և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի 2016 թվականի հոկտեմբերի 7-ի N 486 հրամանների դրույթների համաձայն, որոնք հրապարակվում են Նախարարության պաշտոնական կայքում:

14. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի գլխավոր վարչությունն ապահովում է Նախարարության համակարգի մարմիններում լրատվամիջոցների ներկայացուցիչների գործունեության կազմակերպումը և ժամանա-

կացույցի սահմանումը, լրատվամիջոցների ներկայացուցիչների այցերի համաձայնեցումը ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի հետ, նկարահանումներ կատարելու դեպքում՝ նկարահանումների վայրերի, նկարահանման միջոցների (անօդաչու թռչող համակարգ, տեսախցիկ, ֆոտոխցիկ և այլն) ճշտումը, տեղեկատվական անվտանգության ապահովման վերաբերյալ հրահանգավորումը, ըստ անհրաժեշտության՝ Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի գլխավոր վարչության տեղեկատվական անվտանգության մասնագետի ներկայությունը:

15. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի գլխավոր վարչությունը վարում է տրամադրված հավատարմաքարտերի հաշվառման մատյան:

V. ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏԻ ՄԵՐԺՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

16. Նախարարություն ներկայացված հավատարմագրման հայտերը կարող են մերժվել հետևյալ հիմքերով.

1) հայտը ներկայացնելու համար նախատեսված ժամկետները չպահպանելը,

2) հայտին կցվող փաստաթղթերի ոչ ամբողջական և/կամ ոչ ճշգրիտ ներկայացնելը, եթե Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի գլխավոր վարչության կողմից դրանք ճշտելու մասին հայտատուին ծանուցելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում չեն ներկայացվել անհրաժեշտ և/կամ ճշտված փաստաթղթերը:

17. Լրատվամիջոցի ներկայացուցչի հավատարմագրումը դադարեցվում է, եթե՝

1) նա տարածել է Նախարարության և համակարգի մարմինների գործունեության մասին իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ,

2) հրապարակել է պետական կամ ծառայողական գաղտնիք հանդիսացող կամ Նախարարության գործունեության վերաբերյալ այնպիսի տեղեկատվություն, որը նրան

հասանելի է դարձել ապօրինի ճանապարհով,

3) հավատարմագրումը դադարեցնելու մասին դիմել է նրան հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողը,

4) դադարել է լրատվության ներկայացուցչին հավատարմագրման ներկայացրած լրատվական միջոցի գործունեությունը,

5) լրատվամիջոցի ներկայացուցիչը քայլեր է ձեռնարկել Նախարարության կողմից անցկացվող միջոցառումները դիտավորյալ խանգարելու կամ խափանելու ուղղությամբ, չի ենթարկվել ներքին կանոնակարգին և չի կատարել տեղեկատվական անվտանգության ապահովման առումով տրված ցուցում-պահանջը:

18. Օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչ լրագրողի հավատարմագրման դադարեցման հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում նրա հավատարմագրման դադարեցումը:

19. Լրատվամիջոցի ներկայացուցչի հավատարմագրման դադարեցման մասին հավատարմագրման մատյանում կատարվում է համապատասխան գրառում:

20. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի գլխավոր վարչությունը լրատվամիջոցի ներկայացուցչի հավատարմագրման դադարեցման մասին մեկօրյա ժամկետում գրությամբ հայտնում է լրատվամիջոցի ներկայացուցչին հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 00

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ

ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ

ԼՈՒՍԱՆԿԱՐ

PRESS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ